



Կարգապահական գործ թիվ 16208

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մայիսի 25-ի թիվ 84 ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/54-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՐԱԴ ԱՍՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի և Տարոն Սիմոնյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Մուրադ Ասրյանին (արտոնագիր թիվ 877) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

«Արամյանց» բժշկական կենտրոն առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունը (**այսուհետ նաև՝ Դիմող**) 02.09.2016թ. դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ 2011թ. փաստաբան Մուրադ Ասրյանը հանդիսացել է Դիմողի իրավաբանը և պայմանագրի համաձայն՝ պետք է զբաղվեր Դիմողի բոլոր իրավական խնդիրների լուծմամբ, մասնավորապես՝ կազմակերպեր Դիմողի իրավական հարցերի լուծումները, ապահովեր իր մասնակցությունը Դիմողի հետ կապված բոլոր դատական գործերով:

Դիմողը նշել է, որ դժգոհ լինելով Մուրադ Ասրյանի մատուցած ծառայություններից՝ լուծել է նրա հետ կնքված պայմանագիրը, սակայն Մուրադ Ասրյանը հրաժարվում է Դիմողին հանձնել իր գործունեության շրջանակներում Դիմողի կողմից իրեն հանձնված փաստաթղթերը, այդ թվում նաև հիվանդների բժշկական քարտերի և մի շարք այլ փաստաթղթերի բնօրինակներ:

Ըստ Դիմողի՝ Մուրադ Ասրյանը բազմիցս չի մասնակցել Դիմողի հետ կապված դատական նիստերին, հետամուտ չի եղել հոգուտ Դիմողի դատարանի վճռի կատարման ապահովմանը՝ վտանգելով Դիմողի ֆինանսական վիճակը:

13.09.2016թ. դիմումով Դիմողը ներկայացրել է փաստաբան Մուրադ Ասրյանի կողմից Դիմողին իրավաբանական ծառայությունների մատուցման, ինչպես նաև 2016թ. Ծառայության վճարներ ստանալու վերաբերյալ փաստաթղթերը և նշել է, որ Մուրադ Ասրյանի հետ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը լուծվել է 02.04.2015թ., սակայն 2016թ. փետրվարից մինչև օգոստոսի 22-ը Մուրադ Ասրյանը շարունակել է Դիմողին մատուցել իրավաբանական ծառայություններ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 23.09.2016թ. թիվ 412-Ա/ԿԳ-16208 որոշմամբ փաստաբան Մուրադ Ասրյանի (արտոնագիր թիվ 487) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.6.1, 2.7.2, 3.5.5, 3.1.3, 3.8.5 (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով: Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել «Արամյանց» բժշկական կենտրոն առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունը:

27.09.2017թ. Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Ռուբեն Բալոյանին (այսուհետ՝ նաև Նախապատրաստող):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում ի պատասխան Նախապատրաստողի 03.11.2016թ. գրության՝ Դիմողը, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Հարությունյանի, 21.11.2016թ. ներկայացրել է գրավոր բացատրություն, առ այն, որ «Արամյանց բժշկական կենտրոն» ԱՓԲԸ-ի և Պատասխանողի միջև փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտ չի կնքվել, ինչը պայմանավորված է Պատասխանողին վստահելու հանգամանքով: Իր բացատրության մեջ Դիմողը նշել է նաև այն իրավական և բժշկական բնույթի փաստաթղթերի ցանկը, որոնք, ըստ Դիմողի, Պատասխանողը չի վերադարձրել: Միաժամանակ Դիմողը նաև հայտնել է, որ 15.11.2016թ. Դիմողի և Պատասխանողի միջև կնքված հանձնման-ընդունման ակտի հիման վրա Պատասխանողը որոշ փաստաթղթեր վերադարձրել է Դիմողին, որոնց ցանկը ևս նշված է բացատրության մեջ, կցված է նաև հանձնման-ընդունման ակտը:

Խորհրդի նիստում Դիմողի ներկայացուցիչ փաստաբան Կ. Բաղդասարյանը Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության էրեբունի և Նուբարաշեն տարածքային բաժնին հասցեագրված դիմումներ, որոնք վերաբերում են ենթադրաբար Պատասխանողի մեղքով Դիմողի կողմից բաց թողնված կատարողական ժամկետի վերականգնմանը՝ պնդելով, որ Պատասխանողի ոչ բարեխիղճ գործունեության

հետևանքով Դիմողը հնարավորություն չի ունեցել ապահովել իր օգտին կայացված դատական ակտի կատարումը:

Դիմողի ներկայացուցիչը կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հետ կապված՝ Պալատի Խորհրդի նիստում դիրքորոշում հայտնեց, որ Դիմողը տեղյակ չի եղել Պատասխանողի կողմից դրսևորված՝ Կանոնագիրքը խախտող գործունեության մասին, քանի որ բոլոր փաստաթղթերը գտնվել են Պատասխանողի մոտ, Դիմողը վստահել է Պատասխանողին, և միայն Դիմողի ներկայացուցչի կողմից 22.08.2016թ. Դիմողի հետ պայմանագիր կնքելուց և Դիմողի շահերի պաշտպանությունն ստանձնելուց հետո Դիմողի ներկայացուցիչը հայտնաբերել է Պատասխանողի կողմից Կանոնագրքի՝ սույն գործի առարկա հանդիսացող խախտումները, ուստի, ըստ Դիմողի ներկայացուցչի, վաղեմության ժամկետները պահպանված են:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Մուրադ Ասրյանը 13.09.2016թ. Պալատի ներկայացված պատասխանով (մուտք № 1648-16) հայտնել է, որ Ընկերության հետ համագործակցել է 04.02.2011 թվականից մինչև 24.03.2015 թվականը և այդ ժամանակահատվածում պատշաճ ներկայացրել է Ընկերության շահերն ինչպես դատական ատյաններում, այնպես էլ պետական մարմիններում և իր մասնակցությամբ բոլոր դատական գործերն Ընկերությունը շահել է:

Իրենից դժգոհ լինելու հիմքով ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման հետ կապված Մուրադ Ասրյանը նշել է, որ պայմանագրի լուծման նախաձեռնությունն իրականում իրենն է եղել, քանի որ Ընկերությունը հրաժարվել է վճարել իրեն մատուցված ծառայությունների համար:

Մուրադ Ասրյանը նաև հայտնել է նաև, որ պայմանագրի լուծման ժամանակ հանձնել է Ընկերության կողմից իրեն տրամադրված բոլոր փաստաթղթերը՝ մասնավորեցնելով, որ ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման համաձայնագրի 3-րդ կետը սահմանում է, որ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են Պայմանագրով կողմերի պարտավորությունները:

Գործի նախապատրաստման փուլում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել, ինչպես նաև չի ներկայացել սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստերին, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում, նախապատրաստող անձ փաստաբան Ռուբեն Բալոյանը 08.12.2015թ-ին կազմել է եզրակացություն, համաձայն

որի Փաստաբան Մուրադ Ասրյանի արարքում Կանոնագրքի 2.6.1-րդ, 2.7.2-րդ, 3.5.5, 3.1.3 կետերի և 3.8.5(3) ենթակետի խախտման հատկանիշների առկայության փաստը հաստատվում է սույն գործում առկա ապացույցներով:

Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերը առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 28.11.2016թ-ին:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Մուրադ Ասրյանը 04.02.2011-06.04.2015թթ. եղել է «Արամյանց բժշկական կենտրոն» ԱՓԲԸ-ի իրավաբան-փաստաբանը:
Նշված փաստն ապացուցվում է կողմերի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով:
2. Փաստաբան Մուրադ Ասրյանը, 06.02.2015թ. «Արամյանց բժշկական կենտրոն» ԱՓԲԸ-ի հետ պայմանագրի լուծումից հետո շարունակել է իրավաբանական ծառայությունների մատուցումը՝ այդ թվում «Արամյանց բժշկական կենտրոն» ԱՓԲԸ-ի շահերը ներկայացնելով դատարաններում:
Նշված փաստը հաստատվում է «Արամյանց բժշկական կենտրոն» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված www.datalex.am կայքի քաղվածքներով, դրամարկղային մուտքի օրդերներով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

«Վ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Մուրադ Ասրյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 24.10.2009թ. և 2009-2017թթ ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ այլ կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Մուրադ Ասրյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման համար, իսկ 2.6.1, 2.7.2, 3.5.5, 3.8.5 (3) ենթակետերի պահանջների խախտման մասով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

7.1. Կանոնագրքի 3.1.3 ենթակետի մասով.

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարական գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանալուց երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքեր կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարածայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Կանոնագրքի 3.1.3 կետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքման վրա կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավական հիմքի, փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի՝ նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց:

Ելնելով սույն գործի փաստերից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը խախտել է Կանոնագրքի 3.1.3 կետի պահանջը, քանի որ գործում առկա ապացույցները՝ www.datalex.am կայքի քաղվածքները և Դիմողի կողմից ներկայացված դրամարկղային մուտքի օրդերներն ապացուցում են, որ կողմերի միջև կնքված պայմանագրի լուծումից հետո՝ 06.04.2015թ., Պատասխանողը շարունակել է վճարովի հիմունքներով իրավաբանական ծառայություններ մատուցել Դիմողին: Մասնավորապես,

ԵԿԴ/0233/02/15 գործով ընդհանուր իրավասության դատարանի կողմից 12.02.2016թ. վճռի կայացման դրությամբ, նույն գործով վերաքննիչ դատարանի կողմից 02.06.2016թ. որոշման կայացման դրությամբ, միևնույն գործով վճռաբեկ դատարանի կողմից 17.08.2016թ. որոշման կայացման դրությամբ Դիմողի ներկայացուցիչ է նշված Պատասխանողը: Բացի այդ, համաձայն 27.07.2016թ., 10.08.2016թ., 12.05.2016թ., 30.03.2016թ., 15.04.2016թ. դրամարկղային ելքի օրդերների՝ Դիմողի կողմից Պատասխանողին վճարվել են համապատասխան չափի գումարներ՝ որպես դատական ծախս կամ իրավաբանական ծառայությունների վճար: Սույն գրավոր ապացույցներով հիմնավորվում է, որ առնվազն 2016թ. ընթացքում Պատասխանողը Դիմողին մատուցել է իրավաբանական ծառայություններ մասնավորապես, դատական ներկայացուցչություն՝ գրավոր պայմանագրի բացակայությամբ, վճարովի հիմունքներով: Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում օրենքով սահմանված հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն (...):

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

7.2. Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.5.5, 3.8.5 (3) ենթակետերի մասով.

Անդրադառնալով Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.5.5, 3.8.5 (3) ենթակետերի պահանջների խախտման հանգամանքին Խորհուրդը գտնում է, կարգապահական վարույթը այս մասով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ա. Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.5.5 ենթակետերի մասով.

Կանոնագրքի 2.6.1 կետի համաձայն՝ օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

Կանոնագրքի 2.7.2 կետին համաձայն՝ օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

Կանոնագրքի 3.5.5 կետի՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ փալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի և Կարգի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել

կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարույթն ենթակա է կարճման:

Տվյալ պարագայում Դիմողի կողմից, ի ապացույց Պատասխանողի կողմից դրսևորված ենթադրյալ ոչ բարեխիղճ և ոչ ձեռնհաս վարքագծի, ներկայացվել են փաստաթղթեր՝ մասնավորապես www.datalex.am կայքի քաղվածքներ, որոնցից երևում է, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի դրույթներին ենթադրաբար հակասող գործունեություն իրականացվել է 2014թ.: Խորհրդի նիստում Դիմողի ներկայացուցչի այն պնդումը, որ Դիմողը տեղյակ չի եղել, որ Պատասխանողի կողմից իրականացվում է իր շահերի ոչ պատշաճ պաշտպանություն, և դա հայտնի է դարձել միայն իր հետ Դիմողի կողմից ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելուց հետո՝ 22.08.2016թ., երբ Դիմողի ներկայացուցիչը պարզել է Պատասխանողի կողմից դրսևորված ոչ պատշաճ գործելակերպը, հիմնավոր չէ: Մասնավորապես, Պատասխանողի գործառույթները կապված էին Դիմողի ամենօրյա գործունեության հետ, Դիմողի ղեկավարությունը, համապատասխան իրավական հանձնարարություններ տալով Պատասխանողին, գտնվել է որոշակի իրավատնտեսական հարաբերության մեջ այն սուբյեկտների հետ, որոնց հետ կապված՝ Պատասխանողը պետք է ներկայացներ Դիմողի շահերը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Դիմողը հայտնաբերել էր Պատասխանողի կողմից Կանոնագրքի քննարկվող ենթադրյալ խախտումները շատ ավելի վաղ, քան նշվում է իր ներկայացուցչի կողմից: Սույն հանգամանքով պայմանավորված՝ Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Դիմողի կողմից բաց են թողնվել Օրենքով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ անցել են սույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:

Տվյալ դեպքում, Պալատի խորհուրդը գտնում է, որ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով կարգապահական վարույթը հիշատակված մասով ենթակա է կարճման:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում փաստաբան Մուրադ Ասրյանի գործողությունների իրավաչափությանը:

բ. Կանոնագրքի 3.8.5 (3) ենթակետի մասով.

Կանոնագրքի 3.8.5 (3) ենթակետի համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Դիմողը պնդում է, որ Պատասխանողը հրաժարվում է Դիմողին հանձնել իր գործունեության շրջանակներում Դիմողի կողմից իրեն հանձնված իրավական և բժշկական փաստաթղթերը, այդ թվում նաև հիվանդների բժշկական քարտերի և մի շարք

այլ փաստաթղթերի բնօրինակներ: Նախապատրաստողին ուղղված 21.11.2016թ. գրության մեջ Դիմողը՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Հարությունյանի, նշել է Պատասխանողի կողմից չվերադարձված փաստաթղթերի ցանկը՝ միևնույն ժամանակ ծանուցելով, որ փաստաթղթերի մի մասը 15.11.2016թ. Պատասխանողը վերադարձրել է Դիմողին՝ դա հաստատելով փոխադարձ հանձնման-ընդունման ակտով:

Նույն գրության մեջ Դիմողն ըստ էության ընդունում է, որ բացակայում է որևէ գրավոր ապացույց, այդ թվում հանձնման-ընդունման ակտ, որը կհիմնավորի Դիմողի կողմից մատնանշված փաստաթղթերի հանձնումը Պատասխանողին: Նշված գրության մեջ, ինչպես նաև Պալատի խորհրդի կողմից գործի քննության ընթացքում Դիմողի ներկայացուցիչը նման ապացույցների բացակայությունը հիմնավորեցին նրանով, որ Դիմողի և Պատասխանողի միջև առկա էին փոխվստահության հարաբերություններ, ուստի և Դիմողն անհրաժեշտություն չի ունեցել գրավոր կերպով ձևակերպել փաստաթղթերի հանձնման գործողությունը:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նշյալից բխում է, որ կարգապահական վարույթի կողմի կողմից մատնանշված փաստերն ու արված պնդումները պետք է հիմնավորվեն համապատասխան ապացույցներով՝ Կարգին համապատասխան: Նման ապացույցների բացակայության պարագայում սույն հանգամանքի բացասական հետևանքները կրում է այն կողմը, որը վկայակոչել է համապատասխան փաստը, սակայն թերացել է դրա ապացուցման մեջ:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Սույն պարագայում Խորհուրդը հիմնավորված չի համարում Դիմողի կողմից մատնանշված փաստն առ այն, որ Դիմողի կողմից Պատասխանողին հանձնվել են Դիմողի մատնանշած փաստաթղթերը, քանի որ Դիմողը չի ներկայացրել այդ պնդումը հիմնավորող որևէ ապացույց: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, կարգապահական վարույթը նշված մասով ենթակա է կարճման:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Պալատի կանոնադրության 16.26 կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մուրադ Ասրյանի (արտոնագիր թիվ 877) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1, 2.7.2, 3.5.5, 3.8.5 (3) ենթակետերի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16208 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Մուրադ Ասրյանի (արտոնագիր թիվ 877) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Մուրադ Ասրյանի (արտոնագիր թիվ 877) նկատմամբ կիրառել կարգապահական փույժ՝ նկատողություն:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան